

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Կորիւնի «Վարք Մաշտոցի» պէրքի մասին իմ հրատարակած երկու յօդուածում (որոնցից մէկի հարցութիւնն ուրանում եմ, կ'ըսեմ՝ ինչո՞ւ), սխալմամբ յայտարարել եմ, թէ այն դոյութիւն ունի նաեւ 1668 թ. Տիգրանակերտում ընդօրինակուած, «Ձեռագիր Աբրահամ Երիցոյ» Վոչոսած, անցեալում բանասէր Կարապետ Փոքանցին պատկանած եւ այսօր Երեւանի Մատենադարանի անփականութիւնը դարձած թ. 4584 ձեռագրում, որ պատմադիրների ժողովածու է։ Անցեալում Նորայր Ն. Բիւղանդացու վատաբան լատագրութիւնը պահւում է նրա դիւանում, որը ցուցակագրերիս չէի նշել («Բաղմալէպ», 1983, թ. 1-4, էջ 62-96, յատկապէս էջ 90), թէ մատենան թուանդակում է նաեւ Կորիւնի պորձը, սակայն յօդուածներս շարագրերիս ինձ թուաց, թէ ախլուել եմ եւ յայտարարեցի լոյսհանուակը, ինչպէս «Հանրէս Ամսօրեայքի» 1983 թ. էջ 306-314ի յօդուածիս վերջում։ Սակայն կատկածելով ասածիս վրայ, Ժան. 24ում պրէկտի. «Կարծում ենք, որ Նորայր Ն. Բիւղանդացին ժամանակին այդ ձեռագրից ընդօրինակել է նաեւ Կորիւնի երկը. արեւոք է ստուգել նրա ղիւանում (Շուէդիայի Գէօթեբորգ քաղաքի համալսարանի պրագմատիստական կադմուս 22 տետրերի մէջ)»։ Լատ ալամ՝ Շուէդիայի Գէօթեբորգ քաղաքից լինելով էլ ամբողջ ձեռագրի լուսապատճենը, որն ստացայ որոշ ժամանակ անց եւ համոզուեցի, որ ախլուել եմ. այդ ձեռագրում չկայ Կորիւնի երկը։ Բայց յօդուածիս մէջ ուղղում մտցնելն ուշ էր, այն սպագրութեւն էր։ Նամակով ջանացի կանխել սխալիս կրկնողութիւնը Անթիլիայի «Հասկ Հայագիտական Տարեգրք»ին ուղարկած յօդուածիս մէջ։ Սա լոյս տեսաւ օրերս, ստաբիլիթի 1983-1984 թ. 7-ե միացեալ համարի (1986 թ.) էջ 43-54ում։ Մինչ այդ, 1985 թ. Բաղմալէպում լոյս տեսած «Գրոց դիւտի թուականը եւ Վառնա շարուն Հայոց Թագաւորի վեցերորդ տարին» յօդուածում Հ. Պ. Անանեանը յայտնում էր, որ ստուակ ձեռագիրն այսօր Մաշտոցի անուան Մատենադարանում էր, թ. 4584, թէ դրանում չկար Կորիւնի երկը եւ իրաւամբ դիտել տալիս. «Ուրեմն այս նկատողութիւնը կը

կարօտի գոնէ բացատրութեան մը» (էջ 141) : Ահա այդ բացատրութիւնն եմ տալիս եւ տխուր յայտարարելով իմ նախապէս դրածը՝ այն ետ եմ վերցնում, ինչպէս փորձել էի 1983ի Նոյեմբերի 9ին «Հասկ Հայագիտական Տարեգիրք» հանդէսի խմբագրութեանը դրածա նամակում : Բայց թորթիս յայտնի պատճառներով նամակա հաւանաբար տեղ չի հասել, կամ եթէ երբեք այն ստացուել է, «գործադիր լաւբարակներ» Արտաշէս Տէր Սաչառուրեանը նկատի չի առել, քանի որ էջ 45ա-ում եւ էջ 49 ծան. 20ում վերկնուել է նոյն թիւրիմացութիւնն : Այս պատեհ առկիթից զգտուելով յայտարարում եմ նաեւ, որ մերժում եմ այս երկրորդ յօդուածի հեղինակութիւնս, քանի որ պարոն «գործադիր խմբագիրը» իւրովի վերաշարադրել է այն, իմ վերնագիրն իսկ՝ Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկի գիտա-ֆինանսական հրատարակութեան անհրաժեշտութիւնը դարձրել է «Վարք Մաշտոցի» երկի տպագիրմբը :

Հ. Պ. Անանեանի յօդուածի ֆրանսերէն լեզուով ամփոփումն տկուում է հետեւեալ ստղերով. «M. Martiro Minassian publia récément une note dans "Handes Amsorya" (1983, n. 7' 12), re-proposant la thèse selon laquelle l'invention de l'alphabet arménien aurait eu lieu en 393 », որով ինձ վերագրում է այն, թէ ՀԱ-ի իմ յօդուածումս ես դարձեալ առաջարկած լինեմ հայոց գրեթէ գիւտի համար 393 թուականը, ինչպէս Բագրատ Ուլուքաբեանը «Ստվետական Հայաստան» ամսագրում լոյս տեսած իր յօդուածում (1983 թ., թ. 5, էջ 26-31) : Իմ յօդուածում այս թուականն ինձ չի հետաքրքրել, այլ նկատի ունենալով Կորիւնի երկի ամս տրկու բառեր, որ առաջարկել են ուղղել ամիսս երկու, եւ վերջաբանը՝ Ես գրել եմ. «Միանգամայն համամիտ լինելով նրան՝ կ'ուղենայինք անդրադառնալ բնագրի այդ երկու տեղերին» (էջ 305) : Յօդուածագիր Հ. Պ. Անանեանը ինձ չի վերագրել ամփոփման ստղերում ասուածը, այլ գրել է. «Ինչն ալ իր կարգին երկու հատուածներ Կորիւնի լեզուէն զուրա կը հանէ իրրեւ եկամուտ տարրեր» (էջ 127) :

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՅԱՆ